ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/31** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի ապրիլի 7-ին** կնքված **N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/31»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի հոկտեմբերի 12-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Երկհատորյակի լրացուցիչ վերջնախմբագրման և սրբագրման աշխատանքների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի նոյեմբերի 13-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/31» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» 10 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հրանտ Մաթևոսյան» մշակութային, բարեգործական հիմնադրամն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Դ. Մաթևոսյանի (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի ապրիլի 7-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման **N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/31»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«15 հոկտեմբեր, 2017 թ.»** բառերը փոխարինել **«13 նոյեմբեր, 2017 թ.» բառերով**:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 08030202, h/h 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Հրանտ Մաթևոսյան» մշակութային, բարեգործական հիմնադրամ Հասցեն՝ 0010, ք. Երևան Պուշկինի 3, 49 բ. հեռախոս՝ 094 60-32-66, Հ/Հ 163048562231, ՀՎՀՀ 02568034 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
---------- Ս. Մուրադյան (ստորագրություն)	---------- Դ. Մաթևոսյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.